ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԴԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀՀ ՀԱՆԴԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ
ՆԱԽԱԳԱՀ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ
________________2025 թ

# ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

## ՀՀ 2025 կանանց հանդբոլի հանրապետական առաջնություն

ԵՐԵՎԱՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 2025

## 1.ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- հանդբոլի մարզաձևի մասսայականացումը հանրապետությունում
- մարզիկների վարպետության բարձրացում
- հավաքական թիմերի ստեղծում
- մասնակցություն միջազգային մրցաշարերի

## 2.ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՎԱՅՐԸ

ՀՀ հանդբոլի կանանց հանրապետական առաջնությունը կանցկացվի 2025թ. նոյեմբերի **16-ից - 19-ը** ընկած ժամանակահատվածում, Երևան քաղաքում: Առաջնությունը կանցկացվի մեկ փուլով

## 3.ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Առաջնությունը կանցկացվի շրջանաձև համակարգով: Թիմերի գրված տեղերը որոշվում է վաստակած միավորների առավելագույն քանակով: Հաղթանակի համար տրվում է 2 միավոր, ոչ-ոքի դեպքում 1 միավոր, պարտության համար 0 միավոր: Խաղին չներկայանալու դեպքում թիմին գրանցվում է պարտություն 0:10 հաշվով:

Առաջնությունը կանցկացվի առանց գնդակի մացուկի օգտագործման:

Առաջնությունը կանցկացվի համաձայն հանդբոլի միջազգային ֆեդերացիայի կանոնների և ՀՀ հանդբոլի ֆեդերացիայի հաստատված կանոնակարգի:

## 4.ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԵՎ ԹԻՄԵՐԻ ԿԱԶՄԸ

Առաջնությունը կանցկացվի ՀՀ մարզերի, Երևան քաղաքի ՄՊՄԴ-ների և ակումբային թիմերի միջև: Թիմերի կազմում թույլատրվում է ընդգրկել խաղացողների, որոնք համարվում են տվյալ կազմակերպության անդամ և գրանցված են տվյալ կազմակերպությունում: Թիմերի կազմը՝ 12 խաղացող և 1 մարզիչ:

Առաջնության ընթացքում յուրաքանչյուր մարզիկի թույլատրվում է մասնակցել մեկ թիմի (ակումբի) կազմում: Եզրափակիչում պայքարը շարունակող թիմերին արգելվում է 1-ին շրջանից հետո առաջնությունից դուրս մնացած խաղացողներով համալրել իրենց թիմերը:

Յուրաքանչյուր մարզիչ կարող է հանդես գալ որպես մեկ թիմի մարզիչ:

Թիմերին իրավունք է տրվում մասնակցության նախնական հայտում ներկայացնել մինչև 18 մարզիկ: Թիմը պետք է համալրված լինի կոնկրետ տարիքի խաղացողներով: Իրավունք է տրվում թիմում ընդգրկել փոքր տարիքի 1-4 խաղացող:

## 5. ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Առաջնության անցկացման ընդհանուր ղեկավարությունն իրականացնում է Հայաստանի հանդբոլի ֆեդերացիան, իսկ անմիջական անցկացումը՝ առաջնության գլխավոր մրցավարական հանձնախումբը:

## 6.ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

Մասնակից թիմերը պետք է ապահովված լինեն 2 տարբեր գույնի խաղային համազգեստով: Երկու թիմերի նույն գույնի համազգեստի դեպքում այն պարտավոր է փոխել խաղացանկում առաջինը նշված թիմը ( խաղահրապարակի տերը) , հակառակ դեպքում նրան կգրանցվի պարտություն 0:10 հաշվով:

Առանց հիմնավոր պատճառի խաղին չներկայանալու դեպքում մարզադպրոցը /ակումբը/ կտուգանվի 25000 (քսանհինգ հազար) դրամով, որը կմուծվի ֆեդերացիայի հաշվին:

Առաջնության կեսից մասնակցությունից հրաժարվելու դեպքում մարզադպրոցը /ակումբը/ կտուգանվի 100.000 (հարյուր հազար) դրամով, որը կմուծվի ֆեդերացիայի հաշվին:

Կարգապահական խախտում թույլ տված և խաղից հեռացված (կապույտ քարտ ստացած) մարզիկները, մարզիչները և պաշտոնական այլ անձինք մեխանիկորեն զրկվում են հաջորդ հերթական խաղին մասնակցելու իրավունքից: Նշված անձանց վերաբերյալ հարցը կքննարկվի Հայաստանի հանդբոլի ֆեդերացիայի կարգապահական հանձնաժողովում և կլուծվի վերոհիշյալ անձանց հաջորդ խաղերին մասնակցելու հարցը:

Ցուրաքանչյուր հանդիպման վերաբերյալ գրավոր բողոքները և 50000 (հիսուն հազար) կանխիկ դրամ թիմի կողմից ներկայացվում է ԳՄՀ-ին և Հայաստանի հանդբոլի ֆեդերացիայի ներկայացուցիչների համատեղ նիստում բողոքը հիմնավորված ճանաչելու դեպքում գումարը վերադարձվում է թիմին, հակառակ դեպքում մուծվում է ֆեդերացիայի հաշվին:

## 7. ԾԱԽՍԵՐԸ

Մասնակից թիմերի սննդի և ճանապարհածախսի գումարները հոգում են գործուղող կազմակերպությունները: Մասնակիցների գիշերավարձի, դահլիճի վարձակալման, մրցավարական հանձնաժողովի և մասնակիցների պարգևատրման ծախսերը հոգում են ՀՀ ԿԳՄՍՆ և ՀՀ հանդբոլի ֆեդերացիան:

ՀՀ հանդբոլի մեծահասակների հանրապետական առաջնության մասնակից թիմերը պարտավոր են ՀՀ հանդբոլի ֆեդերացիայի Հ/Հ վճարել **50000** /հիսուն հազար/ դրամ գումար որպես մուտքավճար և խաղից առաջ կտրոնը ներկայացնել քարտուղարական սեղանին:

Հ/Հ 163038103392 ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ Հայաստանի հանդբոլի ֆեդերացիա ՀՎՀՀ 02508717

## 8.ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

Առաջնության ավարտից հետո մրցանակակիր թիմերը ՀՀ հանդբոլի ֆեդերացիայի կողմից կպարգևատրվեն հավաստագրերով և մեդալներով, ինչպես նաև դրամական պարգևատրությամբ:

## 9.ՀԱՅՏԵՐԸ

Առաջնության մասնակցության նախնական հայտերը և մասնակիցների անձնագրերը / բնօրինակը և պատճենը / պետք է ուղարկել ՀՀ հանդբոլի ֆեդերացիա՝ armhandballfed@gmail.com էլեկտրոնային հասցեին մինչև սեպտեմբերի **10-ը**: Հայտերում պետք է նշված լինեն խաղացողների բանկային քարտի հաշվի համարները: Թիմերի վերջնական հայտերը, հաստատված կազմակերպության ղեկավարի և բժիշկների կողմից, և խաղացողների անձնագրերը պետք է ներկայացնել ԳՄՀ-ին տեխնիկական ժողովի ժամանակ: Հայտերը ներկայացնել տպագիր: Անձնագրի բացակայության դեպքում խաղացողը կզրկվի առաջնության մասնակցության իրավունքից:

ԳԼԽԱՎՈՐ ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ